ՇԱԲԱԹ 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1879

№ 11 ՔԱՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 11

ՇԱԲԱԹ 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1879

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ Վ.ՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ-ԵՆ ՀԱՑԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԱՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂԱԿԻ ՎԸ ՌԵԴ. ԳԱԶԵՏԻ «ՊՉԵԼԱ ԱՐՄԵՆԻԱ»

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՆԵՐԿԱՑ 1879 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԱՆ ԼՐԱԳԻՐՔ

կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և պրոգրամմայով

ՇԱԲԱԹՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Թէ Թիֆլիզի եւ Թէ օտար քաղաքներում եւ գիւղերում: Տարեկան բաժանորդագինն է 8 ռուբլի

Թիֆլիսում ստորագրվել ցանկացողը կարող են դիմել. 1) ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ, որ գտնվում է Ս. Վարդանեանի տանը, հեռագրական կայարանին կից. 2) պ. Զաքարիա Գրիգորեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Միխայիլովսկի կամուրջի մօտ պ. Զուբալովի տանը, Լոնդոն հիւրանոցի տակ. 3) պ. Հասր. Էնֆիաճեանցի ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ, Դվորցովոյի փողոցի վերայ, Արծրունու դալէրէում եւ 4) եղբարց Աբովեանց ՄԱԳԱԶԻՆՈՒՄ Միխայիլովսկի կամուրջի վերայ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրատուն հետեւեալ հասցէով՝

Въ редакцію Армянской газеты „ПЧЕЛА АРМЕНІИ“ въ Тифлисѣ.

ԹԻՖԼԻԶ 10-ՒՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ

Անցեալ տարուայ ‘‘Մեղուի,, №ը 40ում. «Ձանազարհորդութիւն Անի» վերնագրով յօդուածի մէջ յայտնած էր հայր Շիրակունու ցանկութիւնը վերականգնելու Անուայ մայր եկեղեցին և այն ուխտատեղի անելու: Իսկ 41 համարում խմբագրութիւնս յորդոր էր կարդացել նոյն վարդապետին հաստատուն մնալու իւր վճռականութեան մէջ և իւր իղձը կատարելու օգնութեամբ և օրհնութեամբ հոգևոր իշխանութեան:

Լսում ենք, որ վերոհիշեալ հայրը վարդապետին և կոնդակ տուել, որ իբրև ունենայ ժողովարարութիւն անելու Անիի աւերակ եկեղեցեաց վերականգնման համար: Մի՞թէ կարելի է այսպիսի գործի վերայ չուրախանալ և յաջողութիւն չցանկալ. միայն մի հանգամանք աչքի առաջ ունենալու է:

Մենք կարծում ենք, որ հոգևոր իշխանութիւնը շատ լաւ կանէր, եթէ հայր Շիրակունուն ժողովարարութեան համար տուած կոնդակի հետ, բարեհաճէր կազմել բանիմաց աշխարհականներից Ալէքսանդրօպոլի և մի հոգաբարձութիւն Անուայ մայր եկեղեցու շինութեան և ուխտատեղաց արդեանց և ծախուց կառավարութեան: Մի վարդապետ, որ օրէնսգէտ չէ և որին հարկաւոր կը լինի շատ անգամ վէճերի համար և դատաստանատները երթևեկել, կարող չէ հոգալ նոր կառուցանելի ուխտատեղւոյն բոլոր պիտոյքները հոգալ: Ինչպէս երևում է մեր մի մանաւոր նամակից, արդէն Մադաթ Բէգի որդին 19-ին նոյեմբերի անցեալ ամի դատ է բացած տաճկական վկայութիւների հիման վերայ և կամենում է իրան սեպհականել Անին: Ի՞նչ պէտք է անել այսպիսի հանգամանքներում մի սոսկական անզրագէտ և օրինաց անտեղեակ վարդապետ: Պարզ է, որ դատը տանել կայ և ինչ կհասնի եկեղեցւոյն, որ կըրկուի նշանաւոր կալուածքներից: Հրաւիրում ենք այս կարևոր հարցի վերայ բարձրագոյն հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն և միջամտութիւնը Անուայ աւերակ եկեղեցիների մասին պարթած դատի վերաբերութեամբ:

Դատն անհիմն պէտք է լինի և եթէ հոգևոր իշխանութիւնը միջամտութիւն անէ, անշուշտ գործը յօգուտ նորա վճռման կատանայ, որովհետև նոյն իսկ տաճկական օրէնքով աւերակ եկեղեցիք, վանքեր, մզկիթներ, գիւղեր և այլն իրանց հողերով չեն կարող մի մասնաւոր անձի սեպհականութիւն համարվիլ, այլ պէտք է յանձնուին այն ազգին, որին նոքա պատկանած են եղել: Բայց այսօր դատ բաց անողն Անիի աւերակների մասին մի մասնաւոր մահմետական բէգ է, որին չէ կարող Անին իւր բազմաթիւ եկեղեցիներով պատկանել: Բայց անտեր ղեաց արդեանց և ծախուց կառավարութեան: Մի վարդապետ, որ օրէնսգէտ չէ և որին հարկաւոր կը լինի շատ անգամ վէճերի համար և դատաստանատները երթևեկել, կարող չէ հոգալ նոր կառուցանելի ուխտատեղւոյն բոլոր պիտոյքները հոգալ: Ինչպէս երևում է մեր մի մանաւոր նամակից, արդէն Մադաթ Բէգի որդին 19-ին նոյեմբերի անցեալ ամի դատ է բացած տաճկական վկայութիւների հիման վերայ և կամենում է իրան սեպհականել Անին: Ի՞նչ պէտք է անել այսպիսի հանգամանքներում մի սոսկական անզրագէտ և օրինաց անտեղեակ վարդապետ: Պարզ է, որ դատը տանել կայ և ինչ կհասնի եկեղեցւոյն, որ կըրկուի նշանաւոր կալուածքներից: Հրաւիրում ենք այս կարևոր հարցի վերայ բարձրագոյն հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն և միջամտութիւնը Անուայ աւերակ եկեղեցիների մասին պարթած դատի վերաբերութեամբ:

Դատն անհիմն պէտք է լինի և եթէ հոգևոր իշխանութիւնը միջամտութիւն անէ, անշուշտ գործը յօգուտ նորա վճռման կատանայ, որովհետև նոյն իսկ տաճկական օրէնքով աւերակ եկեղեցիք, վանքեր, մզկիթներ, գիւղեր և այլն իրանց հողերով չեն կարող մի մասնաւոր անձի սեպհականութիւն համարվիլ, այլ պէտք է յանձնուին այն ազգին, որին նոքա պատկանած են եղել: Բայց այսօր դատ բաց անողն Անիի աւերակների մասին մի մասնաւոր մահմետական բէգ է, որին չէ կարող Անին իւր բազմաթիւ եկեղեցիներով պատկանել: Բայց անտեր կալուածքին, պարզ է, որ ամենքն էլ կուզեն տիրանալ:

Աստարակոյս հոգևոր իշխանութիւնը հասկանում է Անիի աւերակների մեծ նշանակութիւնը հայ ազգի պատմութեան համար: Բացի այն որ նոքա այսօր հայի անցեալ փառքի կոթողն են, նոքա բովանդակում են իրանց մէջ և բազմաթիւ գանձ հայ պատմութեան համար, գանձեր, որոնք դեռ ևս չեն հետախուզած և սպասում են գիտնական գլուխների: Մի՞թէ մինչև սոցա այցելութիւնն այդ գանձերը ոգէտ մի բէգի ձեռին պէտք է անհետանան բոլորովին և կորչեն հայ պատմութեան համար:

Կյուսանք, որ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը այս հանգամանքն աչքի առաջ ունենալով աւելի եռանդով կկոչէ Անուայ աւերակների հարցին:

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱՐՍ

Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի:

Գոնէ իմ տեսած հայաբնակ քաղաքս մէջ չկայ վիճակ մը, որ այնքան հետևողաց լինի ուսման մասին, ինչպէս է Կարս, իւր քառասունի չափ գիւղեր ի միասին առնելով: Դժուարին է գտնել նոցա մէջ այնպիսի մկիկ, որ կարենայ փոքր ինչ ուղիղ գրել և գրուածի մը իմաստն ուպարունակութիւնը հասկնալ: Այսպիսի տեղերում կարելի է լաւ տեսնել ամենքի արժանաւորութիւնքն ու յատկութիւնքը:

Ինչո՞ւ.

Որովհետև ամենքն էլ ամբողջապէս իրանց ճանաչելու ամբողջապէս իրար ճանաչել աշխատում են — ամենքն էլ իրանց բոլոր մտաւոր և հոգեկան կարողութիւնքը գործ դնում կատարեալ երևելու, ամենքն էլ իրանց արտաքինին վայելուչ ու դուրեկան ձև տալի, որ հոգով և մարմնով էլ կատարեալ երևին և իրար դրաւեն:

Խելք ու խորամանկութիւն, գիտութիւն և արհեստ, պճնասիրութիւն և պարզասիրութիւն, չինծու խելօքութիւն և կեղծ պարզամտութիւն — բոլորն էլ թափվում են այդ ժողովատեղիներում — այդ ունայնութեան համաշխարհական հանդիսատեղերում: —

Ահա ժողովեցան կլուբում կամ այլ ուր բազմականք, ծերունիք և պառաւք, տղայացած են, որ այդպիսի արտաքին զուքսերով, երկար պոչերով ու դիմակներով զուարճանում են:

— Ոչ, դոքա արտաքին ձևեր են, արտաքին պահանջներ են — գլխաւորը ներսն է, որինը սրտում, որինը փորում, երիտասարդներինն ու օրիորդներինը սրտում, իսկ ծնողներինը փորում:

— Ի՞նչ. —

— Ցաւ.

Օրիորդներն ու երիտասարդներն անհամբերութեամբ սպասում են այդ օրերին, որ մի տեղ ժողովարանում իրար տեսնեն, իրար հետ խօսեն, միմեանց ձեռք սեղմեն, միմեանց մէջք սեղմեն, իրանց սրտի զգացմունքը արտայայտեն, իրար սէր բացատրեն և միշտ սէր, երբէք խարէութիւն, երբէք հաշիւ, միմեանց իւղալի կամ արտասուալից աչքերում իրար զգացմունք կարդան, իրար հասկանան — բայց բան չիմանան, գոհ ու ուրախ էլ յետ դառնան:

խոստովանելի է, որ քաղաքացի ժողովուրդ քան տարիէ ի վեր դպրոց մը բացեր է և նորա համար ալ երբէք ստակ խնայած չէ, բայց դժբաղդաբար ինչպէս որ կը ստուգիմք, ժամանակի առաջնորդաց և վարդապետաց մէջ միշտ անհամաձայնութիւններ լինելով, իրար կործանելու ջանքեր սրած են, և մէկ միւսկ յաղթահարելով՝ շուտ շուտ իրար փոխեր, երկպառակութիւն և կուսակցութիւն ձգեր ժողովրդի մէջ, որով և պատճառ դարձեր են ժողովրդի այս յետադիմութեան: Վասն զի քաղաքը երբէք հաստատուն առաջնորդ մը ունեցած չէ և դպրոցն ևս մի անյողդողդ դրութեան մէջ եղած չէ, վարժապետ մը չէ կրցեր գէթ քանի մը տարի յարատևութիւն ունենալ, որպէս զի կարելի լինէր պտուղ մը արտադրել: Իսկ գիւղեր միշտ այն թշուառ դրութեան մէջ ճնացած են, ինչ որ էին դար մը առաջ — ոչ դպրոց, ոչ վարժապետ և ոչ ուսումն տեսած են:

Այս ցաւալի հանգամանքն ի հարկէ անտես չէին կրնար ճնալ ներկայ առաջնորդ գեր. Գրիգորիոս վ. Աղուանեան, որոյ բոլոր կեանք զգալին օգտակար գործերով լի են, և որոյ իսկական համոզումն է, թէ «Աղգի մը յառաջադիմութիւնն իր դպրոցներէն կախումն ունի», ուստի նա ամենից առաջ փութացաւ կեդրոնը—քաղաքը, իւր թշուառ դրութենէն վեր կացուցանելու. նորաարդէն ունեցած դպրոց, որ խեղճ վիճակի մէջ էր, բարեկարգեց և նորա յարատևութեան ու զարգացման համար հաստատուն եկամտից աղբիւրներ բացաւ. վկայեալ վարժա-

ՖԵԼԻԵՏՕՆ

Ահա եկան բարեկենդանի օրերը — բացուեցան ու լայնացան ամեն զուարճութեան տեղերի դռները, թնդացին ու ուրախացան երիտասարդների ու օրիորդների սրտերը. Իրաւ է այդ տեղերը միշտ բաց են նոցա համար և սոցա սրտերն էլ միշտ բաբախում են դոցա համար, բայց բարեկենդանի օրերն այլ են: Հաստատ ժամանակ նոցա այցելութիւնքը սովորական են. իսկ բարեկենդաններին պարտք են:

Այսպէս բարեկենդանի օրերն էլ զուարճութեանց տեղերի օբա է, այսօր կրուժոկի օբա, վաղը կլուբի օբա, երրորդ օրը արհեստաւորաց կամ Գերմանացւոց

հարք և մարք բազմեցան ու չարուճեցան պատերի տակ աթոռների վերայ. իսկ երիտասարդք թռան դահլիճի մէջ տեղը — իրար գտան, սկսան իրանց խօսակցութիւնն և բանակցութիւնը:

Ձանկարծ երաժշտութիւնը որոտաց, ջահիլների սիրտը թնդաց: Սկսուեցաւ զուարճութիւնը հանդարտաքայլ կադրիլով. վերջացաւ կատաղի վալսով. զոյգ զոյգ փաթաթված արագոտն եղնիկների նման թռչկոտեցին դահլիճի մի ծայրից միւսը մեր սիրասուն ամէները — քըրտնեցան ու սառեցան իրանց կարօտը առան — կչտացան, սրտերը հովացան և առաւօտեան 3 կամ 4 ժամին քաղցած ու ցաւոտ փորով տուն յետ դարձան, իսկ ծնողները յուսով երկար ժամանակ յօրանջելով, մէկ քնեցին ու մէկ զարթեցան, զանազան երազներ տեսան, մէկին նշնեցին. միւսին պակեցին — իսկ արթնացած իրանց յոյսերը ունայն տեսան և փորերի տեղ ցաւը սրտերում

Ասպիսի տեղերում կարելի է լաւ տեսնել ամենքի արժանաւորութիւնքն ու յատկութիւնքը:

Ինչո՞ւ.

Որովհետև ամենքն էլ ամբողջապէս իրանց ճանաչելնել ամբողջապէս իրար ճանաչել աշխատում են — ամենքն էլ իրանց բոլոր մտաւոր և հոգեկան կարողութիւնքը գործ դնում կատարեալ երևելու, ամենքն էլ իրանց արտաքինին վայելուչ ու դուրեկան ձև տալի, որ հոգով և մարմնով էլ կատարեալ երևին և իրար դրաւեն:

Խելք ու խորամանկութիւն, գիտութիւն և արհեստ, պճնասիրութիւն և պարզասիրութիւն, չինծու խելօքութիւն և կեղծ պարզամտութիւն — բոլորն էլ թափվում են այդ ժողովատեղիներում — այդ ունայնութեան համաշխարհական հանդիսատեղերում: —

Ահա ժողովեցան կլուբում կամ այլ ուր բազմականք, ծերունիք և պառաւք,

ՎԱՂԱԿՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

Ա

Ի. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

փոխարէն։ Յուզարկաւորք յաւելով այն կորստի համար, որ հայ բեմը կորցրեց, վերադարձան։

—

Ահա պ. Գ. Տէր Ազդբանդրեանցի կարդացած դամբանականը։

—

ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ։

Ես խօսում եմ ոչ թէ բառերիս գեղեցկութեամբ փայլելու, այլ որովհետև ղգում եմ իմ մէջ մի սրբազան պարտաւորութիւն նորոգել ձեր յիշողութեան մէջ հանգուցեալի պատկերը, դրա կրած ը և այն խորհրդածութիւնները, որ ծնում են մեր մէջ սորա քաչած դառն վիճակի առիթով։

Մեր Կովկասու հայ թատրոնական յիշատակարանի էջերում մի փառաւոր անուն է աւելանում այսօր. այդ զարդն է մեր ազգանուէր գերասան Մինրզոտ Ամերիկեանը, որ կնքեց իւր կեանքի ասպարէզը ծագիսիթիի հասակում։

Թէպէտ մեր թատրոնի յիշատակարանը ունի և ուրիշ նշանաւոր անուններ՝ այն է հանգուցեալ Մաանենանց և Միրաղեանց, բայց դրա չատ կարճատև մէջոցում զործելով՝ փոքր ազատուրեան Թողին ժողովրդի վերայ և համեմատաբար փոքր նշանակութիւն ունին թատրոնի համար։

Ամերիկեացը հայոց թատրոնի սկզբ նաւատութիւնից, այն է քսան տարուան միջոցում զործել է անդադար։

Հանգուցեալի բնաւերտութիւնը չատ մեծ է և բազմատեսակ։ Թէ իբրև տպագիր զրամեներում և իբրև կոմիկ կոմիզիա ներում և վոդեվիլներում անհամեմատելի է թէ թարգմանական պիեսներում եւրոպական և ռուս հեղինակութիւններից, որոնցից մի քանիսը ինքն է թարգմանել և թէ մեր Թիֆլիսի կեանքից վեր առած պիեսներում, դիտաւորապէս Սունդուկեանցի և Տէր Գրիգորեանցի։

Անկեղծ հնչեակութիւն է առաջարկել սա իբրև արագիլ և անբմրանելի ծիծաղ և զուարճութիւն պատճառել իբրև կոմիկ։

Սորա տղեորութիւնը բեմի վերայ և հիացուցիչ խաղը ոչինչ կնգծ կամ չնծու բան չունէր մէջը. բոլորն էլ և ամեն դիպուածներում՝ բնական և չնորհալի։

Սորա խաղի մէջ ձայնի, մարմնոյ և դէմքի չարժուածքները մեծ և զարմանալի ներդաշնակութիւն էին ներկայացնում։

Եւ չնայելով, որ դա ունէր բնական նշանաւոր մի մարմնաւոր պակասութիւն, որը չատ տպեղացնում էր դորան բեմից դուրս. բեմի վերայ աննշմարելի էր լինում հանդիսականների համար իւր անչափ չնորհի զօրութեամբ։

Հանգուցեալը միակերպ զրաւիչ էր և իբր գեղեցիկ պատմիչ թատրոնի բեմից դանազան վէպերի և անցքերի։

Դիտէր չատ յաջողակ մեր զրականական լեզուն և զործածել է մեր մամուլի մէջ զանազան հետաքրքիր յօդուածներով և ոչ պակաս տեզեակ էր Թիֆլիսի և Երևանի զաւառական բարբառներին։

Եւ չը նայելով իւր ոչ բուն Թիֆլիզցի լինելուն, այն աստիճանի ճիշդ էր ըմբռնել մեր Թիֆլիսի բարբառը, որ չատ խիստ հետազօտողն անգամ դժուար կարող էր նկատել, որ դորա բերանում բարբառի գեղեցկութիւնը ազատագած լինէր։

Ասպինք Ամերիկեանցով սկսուեց հայոց թատրոնը Թիֆլիզում։ Եւ դառնութիւնը և դժուարութիւնը սկսուած զործի ծանրացաւ սորա վերայ ամեն ատեթեամբ։

Սորան թատրոնը չազախովեց, սորա վիճակը չը քաղցրացաւ իւր սիրած արհեստով։

Զարչարանքը, նեղութիւնը, խեղճութիւնը և հիւանդութիւնը մէկ կողմից և ժողովրդի սառնութիւնը և մի քանի ծանծաղամիտ մեր հրապարակախօսների անհիմն և անվայել յարձակումնքները միւս կողմից փուվայրին սորա վախճանը։

Սակաւ են ծնվում Ամերիկեանցներ և եթէ մեր այս անմխիթար մասւորական վիճակում արտադրուի մի նոր այդպիսի հանճար, դժուար թէ կարողանայ ունենալ այնքան քաջութիւն, որ պատերազմի չրջապատող անմխիթար մթնոլորտի մէջ, թէև Մաանենանցների, Միրաղեանցների և Ամերիկեանցների արիւնով փոքր ի չատէ տարթած է ներկայացնելու նոր հանճարին մեր թատրոնական ասպարէզը։

Այս դիակը, այս կնճռուած դէմքով դիակը, որ դրուած է մեր առաջ, անբարբառ, բայց հասկացողին մատչելի լեզուով նախատինք է կարդում մեղ բոլորիս, մեր հասարակութեան անզարգացած, սառն և անչարժ լինելու համար։

Թէ մեր ժողովրդի սառչին դասակարդը և թէ մեր զարգացած կոչուած չերջանը իւր անտարբերութեամբ ի թիւս այլոց և դեպի ազգային թատրոնը հասել է տգեղութեան վերին աստիճանին։

Մենք տգեղ ենք մեծից մինչև փոքրը և ամենահարստից մինչև յետին չքաւորը։

Եւ սա զոհ եղաւ մեր Թիֆլիսի հայերի այս անտարբեր և սառն ոգուն։

Դաս լինի սա մեղ մեր ներկայ սառնասրտութիւնից հեռանալու և յիշելով մեր պատճառած այս նոր զոհը, աշխատենք ուղղել մեզ, չը թաղելով անժամանակ մեր ազգին պատիւ և պարծանք բերող անդամներին։

Իւր վերջին հրաժարականը տալով, կտակ է անում մեղ Ամերիկեանցը ոչ արծաթի, որից ինքն էլ զուրկ էր, այլ կտակ է անում մեղ չըլինել սորանից յետոյ էլ անտարբեր զէպի հանճարները և աւելի փափուկ և քնքոյշ վարուել զոցա հետ. ասել կուզեմ, թէ Ամերիկեացը կտակում է մեղ ուսանիլ, զարգանալ զարգանալ և կատարելագործուել և հասկանալ հասարակութեան ասպարիզում ծառայելը ոչ թէ խօսքով միայն, այլ և անչուշտ գործով և կատարեալ անձնուիրութեամբ։

ՆԵՐՔԻՆ

ԹԻՖԼԻԶԻ ԻՄԱՍՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԸ։

5 փետրուարի 1879.

—

Այսօրուան նիստի համար նշանակուած գործերի քննելուց առաջ, պ. Դոլուխանեանցը, որ կատարում էր և այսօր քաղաքագլխի բացակայութեան պատճառով նախագահի պաշտօնը, յայտնեց ժողովին հետևեալ տեղեկութիւնները։ Պ. Ա. Անտոն Ծողոմոնեան Ղորղանեանցը, որ ընտրուեցաւ քաղաքագլուխ, նամակով պաշտօնապես յայտնում է իրաւասուներին հիւանդութեան պատճառով իւր հրաժարումը։ Ժողովը նշանակեց ամսիս 11 կիւրակի օրը, նոր ընտրութիւններ անելու։ Ք. վաճառուել է ամսիս 4-ին անորդի այրի Շիօյեանցը, որ գողովենկի պրոսպեկտի վերայ ունէր շքեղ տներ, հրդեհից յետոյ նորից վերանորոգուած։ Այդ տների արդիւնքներից նա տարեկան 20,000 ռ. կտակել է, ինչպէս յայտնեց պ. իրաւասու Յարթաշեանցը, քաղաքիս չքաւոր հրեաների կրթութեան և զանազան այլ բարեզործական նպատակով զործածելու։ Ժողովը յայտնեց իւր շնորհակալութիւնը այդպիսի առատ նուիրատուութեան համար և իրաւասուները լսմբովին տեղերից ոտի վերայ կանգնելով յարգեցին հանգուցեալի յիշատակը։

Յետոյ սկսուեց այս օրուան համար նշանակուած գործերի քննութիւնը։ Շատ երկար խօսակցութեանց առարկայ եղաւ իրաւասու պ. Նիկոլաձէի առաջարկութիւնը ժանտախտ ցաւի առաջն առնելու մասին։ Պ. Նիկոլաձէն իւր բանական երկար ճառի մէջ բացատրեց, թէ ինչ տեսակ ցաւ է ժանտախտը և թէ ինչ միջոցներով կարելի է ազատ մնալ այդ ախտից, առաջ բերելով այդ գործի մէջ ուսումնական մասնաձեների արած հետազօտութիւնները։ Պատմեց թէ ինչ պատրաստութիւններ են արել Ռուսաստանի զանազան քաղաքներում քաղաքային վարչութիւնները, մանաւանդ Ս. Պետերբուրգ և Մոսկվա մայրաքաղաքներում, այդ ցաւի առաջն առնելու նպատակով և առաջարկեց, որ Թիֆլիզցիներն էլ, թէպէտ և կայ կառավարութեան կողմից այդ գործի համար կազմած մի մանաժողով բժշկապետ պ. Մինկիէլի նախագահութեամբ, քաղաքային վարչութիւնն էլ գործէ այդ նպատակով և գործ համար իրաւասուների ժողովը կազմէ մի մանաժողով, որին և յանձնէ այդ գործի մասին հարկաւոր տեղեկութիւններ հաւաքելու և կարզադրութիւններ անելու։ Պատնադէտների արած հետազօտութիւններից երևեցէ, որ ժանտախտից բնակիչներին ազատ անելու համար հարկաւոր է ամենամեծ հոդացողութիւն ունենալ քաղաքի փողոցների և տների մաքրութեան և ուտելիքէնների լաւութեան վերայ և եթէ քաղաքը, ինչպէս պ. Նիկոլաձէն կարծում էր, այս գործի համար ծախք անէ 15—20 հազար ռուբլի, քաղաքս կը շահուի և այն դիպուածում, եթէ բարեբաղդաբար մեզ չայցելէ այդ ահագին հիւրը՝ ժանտախտը։ Քաղաքիս փողոցները, որ շատ տեղերում ներկայացումն ամեն տեսակ ցաւերի շտեմարան, կը մաքրուին։

Մի քանի վիճաբանութիւններից յետոյ ժողովը վճռեց այժմ իսկ կազմել իրաւասուներից մի մանաժողով, որին և յանձնել կազմել պրոզրամմա իւր գործունէութեան մասին և որոշել այն միջոցները, որով կարելի կը լինի իրագործել այդ պրոզրամման և այս գործը շուտով պատրաստելով ներկայացնել իրաւասուների ժողովին, որ սա քննելով և հաստատելով այդ մանաժողովի վճիռները, խնդրէ կառավարութիւնից տալ այդ մանաժողովին կարևոր իրաւունքներ գործը յաջողապէս առաջ տանելու համար։ Ընտրուեցան հետևեալ իրաւասուները այդ մանաժողովի համար՝ պ. պ. Ռոտինեանց, Վարդանեանց, Աբգար Յովհաննիսեանց, Աբիմեանց, Ծուրիկեանց և Դոբժանսկին։

Քննելու առաջարկուած միւս գործերից չը կայն առանձին ուշադրութեան արժանի, բացի այն մի գործը, որ ժողովին առաջարկվում էր հաստատել 1878 թուին արտաքոյ կարգի ծրագրերի համար արած ծախքը։ Անցեալ տարուան վերջերում ծախս է եղած 1045 ռ. ձրագալոյց անելու երկու առիթով— մեծ իշխան փոխարքայի վեսայի քաղաք մտնելու և Պարսկ առժամ տարեդարձը տօնելու համար։ Իրաւասու պ. Ալադաթեանցը յայտնեց, որ թէպէտ քաղաքային ծախսերի մէջ 1878 թուին ձրագալոյցների համար նշանակուած էր միայն 1000 ռուբլի, բայց այսօրուան առաջարկուածով հերու քաղաքս ծախսել է այս առարկայի վերայ 4000 ռուբլուց աւելի։ Բայց և այնպէս ժողովը հաստատեց քաղաքային վարչութեան արած ծախսը 1405 ռուբլու քանակութեամբ։

ԶԱՂԱՔԱԿԱՆ

Շատ անդամ ամենամեծ քաղաքական անձինք էլ սխալմունն իրանց հաշիւների մէջ, երբ սոքա հիմնուած չեն ազգերի բարոյական ուժի ճիշտ ճանաչողութեան վերայ։ Սոյն երևոյթը շատ պարզ կերպով երևեցաւ Բիսմարքի զործունէութեան մէջ։ Ֆրանսիան եօթը տարի առաջ այն վիճակի մէջ էր, որ իւր օրինակը չունի պատմութեան մէջ։ Հինգ հազար միլիոն տուգանք առնից, նորա նշանաւոր նահանգները յափշտակուեցան և աւերուեցան, երկու ամենանշանաւոր հարուստ ձեռագործական նահանգներից էլ զրկուեցաւ։ Բիսմարկի հաշուով Ֆրանսիան երբէք չունէր քաշելու չէր և միշտ թոյլ և աննշան քաղաքական դերը պիտի ունենար. ի ներքուստ էլ անդադար կուսակցութեանց վէճերը անպակաս լինելով։ Բայց ներկայն բոլորովին հակառակն է ներկայացնում։ Այսօր Ֆրանսիացիք 7 տարիից յետ ցոյց տուին, որ իրանք այն անբարոյական ազգը չեն, որպիսի նրանց շատերը ճանաչում էին, այլ ընդհակառակը նոքա մեծ բարոյական ոյժ ունին իրանց մէջ, որ միայն կարող էր դիմանալ այն սարսափելի հարուածին և կրկին վերականգնել աւելի ահեղ կերպով թշնամիների դէմ։ Եւ յիրաւի այսօր հանրապետութեան հաստատվելով ապահոված է Ֆրանսիան բոլորովին կուսակցութեանց ապատնացած վտանգից. իւր արհեստով և վճռաւորութեամբ վարձատրած է իրան իւր տուած տուգանքի փոխարէն։ Իսկ այն յաղթող, հինգ միլիարդ տուգանք ստացող Գերմանիան ներկայացնում է բոլորովին հակապատկերը այն երջանիկ վիճակին, որ դուշակում էին նորա համար 1871 թուականին անհեռատես անձինք։ Դրամական վիճակը Գերմանիայի անհանգստացնելի է, մինչդեռ Ֆրանսիան օր աւուր հարստանալու վրայ է։ Կուսակցութիւնք անհանգիստ են անում Գերմանիայի կայսերութեան կանգլերին այնպէս, որ սա ստիպուած է զանազան բուռն օրէնքների օգնութեան դիմելու, մինչդեռ Ֆրանսիան բոլորովին հանդիստ է այդ կողմից։ Գերմանիայի կառավարութիւնը ստիպուած է մինչև անգամ պատմագրութիւնների ազատութիւնը սահմանելու, մինչդեռ Ֆրանսիայի կառավարութիւնը միայն ամեն քաղաքացուց պատասխանութեամբ հանգիստ է։ Ամեն Կերմանիան, որ իւր Կուպպի թնդանօթներով դղրդացրեց Ֆրանսիան, այսօր այս վերջինի խոշտանգութեան ենթարկուած է։ Գերմանական ազգի ազատամիտ և ընտիր մասն այսօր աւելի Ֆրանսիային է համակրում, քան իր կառավարութեան, որ իր իշխանութիւնը լռնութեան վերայ կամենում է հիմնել։ Ֆրանսիան այնքան զօրացել է, որ իշխան Բիսմարքին ճնում է միայն խորամանկութիւն գործ դնելու Գերմանիայի հակավարչական կուսակցութիւնը միացնելու այն վտանգով, որ իբրև թէ սպառնում նրան Ֆրանսիայի կողմից, որ բնաւ սպառնալու միտք չունի։ Բայց մի և նոյն ժամանակ իւր մէջ միակվող և հրատարակվող ազատութեան և աշխատանաց զաղափարներով հիմնայատակ է անում Բիսմարքի բոլոր նախագծերը։ Սորա համար է, որ երբ Գամբետտային յայտնում են Բիսմարքի դժգոհութիւնը, թէ ժողովրդապետութիւնը շատ է զօրանում Ֆրանսիայում Գամբետտայի շնորհիւ, և պէտք է սա փոքր ինչ զսպէ իւր եռանդը, Գամբետտան ժպտում է և ասում. Այո, պ. Բիսմարքը կցանկայ ինձ Ֆրանսիայից էլ աքսորել։ միայն պէտք է իմանայ, որ այն ժամանակ ինձ զրկարաց կընդունեն նոյն իսկ Բերլինում։ Այսպէս անհիմն է այն քաղաքականութիւնն, որ ոչ թէ ժողովրդի գիտակցական ուժի, այլ ժամանակաւոր արհեստական կերպով զրգռած ոգևորութեան վերայ է հիմնած։ Ներկայումս Ֆրանսիան, ահագին հարուած կրելից յետ, աւելի զօրեղ է քան այդ հարուածից առաջ էր, մինչդեռ Գերմանիան այսքանամեայ յաղթութիւնից յետ շատ աւելի թոյլ է, քան իւր յաղթութեան ժամանակ. որով հետև առաջինի քաղաքականութիւնը հիմնած է ազգի գիտակցական ուժի վերայ, իսկ երկրորդինը Բիսմարքի արհեստական կերպով հնարած նախագծի վերայ։ Ֆրանսիան այստեղ հասցնողներն եղան թիերը, Գամբետտա և Գրեվին, որոնք իրանց զործունէութիւնը հիմնեցին ազգի բարոյական ուժի վերայ։ Ֆրանսիան այսօր ապրում է. իսկ Գերմանիան ճգնաժամի մէջ է։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ախալցխայից պ. Հայկունին հաղորդում է հետևեալ լուրերը.

— Աստղական հիւանդութեան, որ տարածուած է բանակներն ժողովրդեան մէջ, պատճառաւ կազմուած յանձնաժողովը իւր առաջին նիստն ունեցաւ։ Ժողովի անդամներն են պ. պ. գաւառապետը, գաւառական բժիշկը և քաղաքային վարչութեան անդամներից մինը։ — Այդ պարոնները աշխատում են ստուգել, թէ արդեօք ճշմարիտ է ժողովրդեան մէջ տարածուած այդ լուրը, որպէս զի առաջն առնուի։ — Մեղուի մէջ տպուած պ. Չէնիսթքէրի յօդուածը այդ հիւանդութեանց մասին թարգմանելում է բժշկի պահանջմամբ ռուսաց լեզուով։ Ժամանակին մենք կաչխատենք այդ յանձնաժողովի և նորա գործունէ-

Թեան մանրամասն պատմութիւնը հաղորդել Մեղուի ընթերցողներին:

—

Ախալցխայի մէջ այս տարի չատ ջերմ հով է, այնպէս որ հաւանական է թէ գարնան հիւանդութիւններ լինին:

—

Լսում ենք, որ Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութիւնը հիմնուելով պ. նահանգապետի միջնորդութեան վերայ պ. Ցովակիմ Գևդամեանցին նշանակել է Ախալցխայում քաղաքագլուխ ի կողմանէ Տէրութեան՝ մինչև չորս տարի լրանալը (1876 — 1880) ժողովրդեան իրան իրաւունք է տրվում ընտրել քաղաքագլուխ:

—

Լսում ենք, որ կարապետեան և եղիազարեթեան երկսեռ հոգևոր ուսումնարանների հոգաբարձուները ցարդ չեն ստացել հներից հաշիւները և գործերը: Տեղական հոգևոր իշխանութիւնն այդ մասին չատ դանդաղ է չարժվում:

—

Թեմական վերատեսչի կարգադրութեամբ անցեալ սեպտեմբերից մեր ուսումնարանների պ. պ. ուսուցիչները չաբթէնը մի անգամ փորձնական դասեր են խօսում և յետոյ այդ դասերը մանկավարժական ժողովներում քննութեան ենթարկում:

—

Անցեալ տարի քաղաքիս Հայ երիտասարդներից՝ բարձր Սրբազան Սաղինեանցի նախագահութեամբ մի յանձնաժողով նշանակուեցաւ քաղաքումս մի աղքատանոց բանալու համար յանուն հանգուցեալ Կարապետ Արքեպիսկոպոսի: Այդ յանձնաժողովը մշակեց կանոններ և ուղարկեց ձեռամբ Սրբ. Աւագնորդի ի հաստատութիւն վեհափառ կաթողիկոսի, որը վերադարձրել էր նոյն կանոնադրութիւնը մի քանի խելացի հարցումներ տալով և տեղեկութիւններ պահանջելով, որպէս զի հաստատէ կանոնադրութիւնը, բայց մինչև այսօր այդ գործը անկատար մնաց, որովհետև սրբ. Սաղինեանցը մի քանի անգամ հասարակութիւնը ի ժողով հրաւիրեց՝ նոքա չեկան: Ցանկալի էր, որ առաջիկայ մեծ պասից սրբ. Սաղինեանցը այդ հարցը զարթնցնէր կրկին: Ժողովուրդը հիմա հեչտութեամբ կարելի է հաւաքել մեչչանների վարչութեան ձեռամբ:

— *Սրբազան Սաղինեանցը քանի ժամանակէ ի վեր գտնվում է Ախալքալաքայ վիճակում ծառայական գործերով:*

Նորին Գարձր Սրբազնութիւնը կը վերադառնայ Ախալցխայ, ինչպէս ասում են, մեծի պասից առաջի չաբթուն:

—

Ախալցխայում ամսոյս 1-ին ռուս թատրոնասէրները զինուորական ժողովարանի դահլիճում ներկայացումն են տուել յօգուտ Գրիբօեդովի տեսկենդիայի: Ներկայացումը չատ յաջողակ է եղել և հանդիսականների բազմութիւնը չատ մեծ:

—

Մեզ հաղորդում են, որ Ախալցխայում եղող զինուորների մի բաժնի մէջ տիֆ հիւանդութիւն է երևացել:

—

Մեծ. պ. բժիշկ Աղէքսանդր Ղազարեանցն, որ Ախալցխայի հայ երկսեռ դպրոցների հոգաբարձուներից մէկն է, նշանակած է կարսի հիւանդանոցի գլխաւոր բժիշկ:

—

Բաքուից մեզ հաղորդում են, յունվարի 30-ին այնտեղի կլուբում կատարվել է Գրիբօեդովի յոբելեանը և յետոյ եղել է հայկերոյթ, որոյ ժամանակ երկու երևելի մանկավարժներ տեղական ըէալնի ուսումնարանից, չափազանց ուրախացած՝ բռնամարտութեամբ պարապել են դահլիճի մէջ հրապարակով և միմեանց զարս դու պատուիրեցեր դնքսել են, Ապրին:

—

«Голосъ»-ի կ. Պօլսի թղթակիցը յունվարի 29-ին հաղորդում է, որ երեք օր առաջ ստացվել է այնտեղ հեռագիր, որ գաղտնի են պահում: Իբրև թէ այդ հեռագրի բովանդակութիւնն այն է, որ Չէյխունցիք դժգոհ լինելով Հալէպի վալիի իրանց հետ անարդար վարմունքից, զէնք են առել և յարձակվել Մարաշի վերայ ու ազատելով նորա բանտից իրանց գերիներին՝ վերադարձել են իրանց հայրենիքը: Թղթակիցն ասում է, որ Հայերն, որոնց խոնարհութիւնը մինչև ցայժմ հաւատարվում էր նոցա թշնամութեան, վերջին ժամանակ մեծ ախոյժ և եռանդ են ցույց տալիս ազատութեան համար և որ նոքա Տաճկաստանի քրիստոնեայ ազգերից ամենից աւելի յարմարութիւն ունեցողն են քաղաքական կեանքի համար: Հայերի այս եռանդը չատ տպաւորութիւն է գործում և մխիթարական է ամեն դեսպանների համար: Մանաւանդ նրանց պաշտպան է ֆրանսիական դեսպան Ֆուրնիէն:

—

Ամսոյս 6-ին երեքշաբթի Ներսիսեան դպրոցը հանդիսով ծանեց Սրբոց Վկայաբանց ծնունդը: Սուրբ պատարագից յետոյ բոլոր աշակերտները, ուսուցիչների և հոգաբարձուց հետ ժողովեցան Ներսիսեան հին դպրոցի դահլիճում, ուր եղան ճառախօսութիւնք, եղիչէից և Վարդան փարպեցիից ընտիր և ոճնին յարմար տեղերի ընթերցուածք և երգվեցան յարմարաւոր չարականք և ազգային երգեր: Ի վերջոյ նորին Բարձր Սրբազնութիւն՝ առաջնորդն Թիֆլիսի և Իմերեթի, որ ներկայ էր հանդիսին, օրհնեց ներկայ եղողներին և ցանկանալով հայ հոգևորականութեան ունենալու Վկաներ՝ վերջ տուեց հանդիսին:

—

Ամսոյս 8-ին հինգշաբթի Սուրբ Գայիանեան օրիորդաց դպրոցը, ըստ սովորութեան, ինչպէս ամեն տարի, այս տարի էլ հանդիսով ծանեց Սրբոց Վարդանանց ծնունդ:

—

Լսում ենք, որ հանգուցեալ տիկին Նատալիա Շիրվանցի մեծ. կտակատարները մտադիր են Հանգուցեալ կտակած գումարից մի նշանաւոր մասը որոշել Սբ. Գայիանեան, Սբ. Մարիամեան և Ներսիսեան դպրոցներին, որպէս զի սոցա վարչութիւնք պահեն յանուն հանգուցեալին որոշեալ թուով որբերիք և որբեգիրք Թիֆլիզի չքաւոր Հայ ընտանեաց զաւակներից:

—

Մոյս 14 տեառնդառաջի օրը վանքի մայր եկեղեցում, ներկայութեամբ բոլոր եկեղեցական դասի, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուց, ուսուցչաց և աշակերտաց կկատարվի հանդիսաւոր ներսէս կաթողիկոսի հոգեհանգիստ: Պատարագիչը Սրբազան առաջնորդն է. հոգեհանգստից յետ բոլորւիքեան կերթան Ներսիսեան դպրոցի դահլիճն, ուր կլինի հանդէս, կկարդացվին ճառեր և կերգվին ազգային յարմարաւոր երգեր: Հանդիսին ներկայ լինել կարող են ամենքն, որոնք հետաքրքրում են դպրոցին և յարգում նորա հիմնադիր Ներսէս Ե-ի յիշատակը:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՆՁԵԱՆՑ

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամար Տէր Գաբրիէլեանցի Русское слово—նոր դասագիրք ռուսերէն լեզուի հայ դպրոցների համար, երկրորդ տպագրութիւն նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լցացած: Այդ գիրքը հաճութեամբ Պ. թիֆլիսի վարժարանի ընդհանուր և վրաստանի և Իմերեթի վիճակի հայոց բոլոր մէջնախարդ և ծխական ուսումնարաններում: Սա ընդունված է նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում է Թիֆլիզում բոլոր գրավաճառանոցներում, կարող են ստանալ և աշակերտասիրողից Պ. Աբովեանցների խանութում Միխայլովկու կամարջի վերայ. գինն է 40 կոպեկ: Ճանապարհի ծախսը առնողների վրայ է:

Поступило въ продажу книга.

Шараканъ (Շարական)

Богослужебніе каноны и пѣсни армянской восточной церкви, переводъ съ древно-армянскаго языка Н. Эмина.

Москва. 1879 г. Цѣна съ пересилкою 3 р. 50 к.

Выписывать можно отъ переводчика, живущаго въ Москвѣ, близъ Красныхъ Воротъ, домъ Фиметиса.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ, Ր. ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Մ՝իրիմանեանցի, №-8 (Սկրուժնոյ սուդի տակ, «Սուլտան» մադազինում):

1879 թ. յունվարի մէկին Թիֆլիզում հաստատվեցաւ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
Ր. ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑ,

Այս հաստատութեան նպատակն է հասարակութեան անդամներին հեչտ միջոց տալ ստորագրվելու որ և է լրագրի՝ խմբագրութեան գներով և հեչտացնելու լրագրի՝ գիրների մէջ մասնաւոր յայտարարութիւններ հրատարակելը, նոյնպէս խմբագրութեանց գներով: Գործակալութիւնը յանձն է առնում հրատարակելու յայտարարութիւնն այն լրագիրներում, որոնց մէջ ցանկանայ տուողը և նոցա թարգմանութիւնը ռուերէն, տեղական կամ օտար լեզուներով առանց վարձի անելու:

Եթէ ստորագրվողը կամ յայտարարութիւն տուողը կը կամենայ խմբագրութեան անդորրագիրն ունենալ, գործակալութիւնը յանձն է առնում կատարելու այս պահանջն էլ:

Դայն սրանից խմբագրութեան մէջ կ՝վաճառվին տարեկան լրագրերի և մայրաքաղաքներից մի քանի հրատարակութեանց:

Գործակալութիւնը առանց յետաձգութեան կ՝կատարէ ամեն յանձնարարութիւն չուտով և ճշտութեամբ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՋԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

վաճառվում են ի միջի այլոց և հետևեալ գրերը՝

1. Ներսէս Հիսերորդ աշտարակցի կաթողիկոսի կենսագրութիւնը, ժողովեաց Ն. Երիցեանց. չատոր ա 30 կ.
2. . . . . նոյնը հատոր. բ 40 կ.
3. . . . . գ 30 կ.
4. Մխիթարեկեանց—Գօշ Մխիթարի, Ոզնմպիանոսի և Եզոպոսի առակները. . . 1 ռ.
5. Վիշապազուն—Ոբընէ . . . 40 կ.
6. Յարոյ—Հայոց մամուլը . . 30 կ
7. Տէր Աստուածատրեանց-Վ. Հօրնի անապատում 30 կ.
8. Առաքելեանց Հաւատարմութիւնը ամէն արգելքներին յաղթում . . . 40 կ.
9. . . . . Խաւարից դէպի լոյս. . 40 կ.

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ
ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ:

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականից:

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու տարի հ. 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկաններ:

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մրանել աղջիկ՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատուները:

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վիլհանմինովսկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №-11:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 10-го ФЕВРАЛЯ 1879 г. Типографія Амб. Энфіанджянцъ и К- Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց: